ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 100.000 ՀՀ դրամ:

Հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պարտավորեցնել ստորագրելու և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին տրամադրել ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 15.02.2024թ. ներկայացրած պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը և որպես հետևանք՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պարտավորեցնել վճարելու պայմանագրի գնի չվճարված 5 տոկոսը, այն է՝ 85 114 722 ՀՀ դրամը:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը;

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am